թիւնով, երկրորդ՝ Մատրասայ կամ Փարքանջ, երրորդ Լնդաբ գիւղն, չորրորդ ի Գիւրջեան Գաւառակի, ի Լահիճու գաւառակի Գալակիայ, Գանքաշէն և Գիրք գիւղօրայք, որոնք թէ իրանց մարդաշատ բազմութիւնով թէ օդոյ առողջութիւնով յարմար են ուսումնարանի։

Յաւելին այս է, որ ոչ քաղաքումն և ոչ գիւղօրայքումն չկան եռանդոտ և ազգասէր անձինք, որ ինձի օգնութիւն անեն, և շատ դժուարութիւնով հասկանում իմ առաջարկութիւններն իրանց ապագայ վիճակի և իրանց զաւակաց բարօրութեան համար։

Շատ մխիթարական կը լինէր ինձ եթէ գտնէ մի երկու երեք ուսումնական երիտասարդներ գտանվէին Շամախումն ինձ օգնական լինելու համար ազգային գործերումն։ Միայն եմ. բայց վայ միոյն եթէ գլորիցի, և ով է որ կանգնեսցէ զնա։

Ներեսցէ ինձ յարգոյ ընթերցողն փոխանակ մէջն բառի վերստ գրելուս համար. և երկրորդ՝ եթէ չկայ ճշդութիւն ճանապարհների հեռաւորութեան և մերձաւորութեան համար՝ ես կանգնած չէի չափում այս ճանապարհներն, և չափածի հաշուաթուղթն ես չունէի առ ձեռն, և մանաւանդ տեղագրութիւն չէի անում։



ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՃԱՇՈՑԻՆ

կամ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆԱՑ։

Եթէ քանի՞ ըղձալի և հետաքրքրական է մերնախնեաց վերայ գրուած ամեն մի տեղեկութիւն՝ թէև սակաւ ևս լինի. զոր ամենայն ախորժանօք և տենչանօք կընթեռնու իւրաքանչիւր Հայրենասէր և բանագէտ։ Ուստի հետևեալ յիշատակարանս ևս՝ որ թէպէտ շատ համառօտ, բայց ի վայելս նաև հրամանաւ Աստուածասէր Լևոն Գ Թագաւորի մերոյ աւագ որդի Ուսումնասէր և Գիտնական Պարոն Հեթմոյ (որ զկնի հօրն թագաւորեց)՝ ի թուականի Հայոց 2ԼԵ (Փրկչ. 1286) օրինակեալ ընտիր մագաղաթի վերայ բոլորգիր մի ճաշոցի ի վերջ յաւելացած կամ գրուած է. որ մանաւանդ պարունակելով մի քանի կարևոր և խիստ հետաքրքրական տեղեկութիւնք Ռուբինեանց վերայ մինչև Լևոն Գ Թագաւոր՝ կարող է մերազնեայ և օտար բանասիրաց հետաքրքիր ուշադրութիւնը գրաւելու արժանի նիւթեր հաղորդել, որով կը յուսամք թէ Ազգային պատմութեան և նախնեաց մատենագրութեանց վերայ գէթ դոյզն ինչ պիտանի նշխար ևս նուիրած կը լինիմք։

Ի սմին բովանդակեալ տեղեկութիւնք՝ անշուշտ պէտք է՝ որ ստոյգ և հաւատարիմ աղբիւրներէ՝ այսինքն գրուածքներէ և կամ աւանդութիւններէ քաղուած ու հաւաքուած լինին, և առանց տարակուսելոյ այլոց գրչաց ընդօրինակութեանց ախիթներով՝ կամ օտար և անհարազատ ձեռաց տակ սխալանօք փոփոխուած չը լինելոյն վերայ, ըստ որում հեղինակին՝ այն է Ա-ԼԷՆ ընդօրինակողին հարազատ ձեռագիր բնագիրը ունենալով Ս. Աթոռոյս Մատենադարանի մէջ, յորմէ կօրինակեմք մեք և կընծայեմք ի լոյս միջոցաւ Արարատ ամսագրոյս։

Ցիշատակարանը որքան որ համառօտ է, սակայն կրկին՝ իրրև պաշտօնական ձևով՝ այսինքն՝ Ռուբինեանց հարստութեան ցեղին՝ այն է Պ. Հեթ-

մոյ հրամանաւ գրուած, և այն առանց ընդօրինակութեանց միջոցաւ մեզ հասած լինելոյ, որ նոյն պատճառներով և փոփոխութեամբք ինչպէս միւս պատմագիրք և նախնեաց շատ հեղինակութիւնք՝ կրնային այլ և այլ հաւանական կամ կարծիքական դատողութեանց և քննութեանց ներքև ձգուելու,—խիստ մեծ կարևորութիւն ունի՝ մանաւանդ թէ նշանաւոր ևս է։

Հարադրութիւնը գրաբար լեզուով՝ ըստ բաւականին լաւ է. սակայն կը գտուին մէջը՝ ինչպէս նոյն դարերու գրեթէ ամեն գրուածոց մէջ՝ Խ-ՆԴ-Ի ժամանակ մեր Ազգայնոց մէջ սպրդեալ և սովորական ու գործածական եղած բառեր, զորօրինակ, Տ-Ի (գուքս), Վ-Ն կամ Բ-Ն (կնիք թագաւորական՝ ըստ Ցունաց), Պ-Յ (դեսպանապատիւ իշխան), ԲԸՆԻ կամ ԲԸՆ- (իշխան), Ո-ՐԲ-Ր-Ր կամ Ո-ՆԲՐ-Ր՝ այն է՝ ԻՄԲԵՐՈՐ (կայսր) և այլն։

Բուն Սմբատ սպարապետի (Գունդստապլ) հարազատ գրուածք Տ-ԸԲԲ-ՐԵՆ (Հայ. 2ԻԵ և Փրկչ. 1277) աւարտմանէն ինն տարի յետոյ և Վահրամ վարդապետ պատմագրէն յառաջ (մի քանի տարով) գրուած է հետևեալ յիշատակարան, և չգիտեմք թէ՝ սորա հեղինակը ով է, և թէ Սմբատայ պատմագրութեան պատահած և ընթերցած է զայն, կամ թէ Վահրամ վարդապետի հետ ծանօթ է, և նորին պատմագրութիւնը տեսած և կարդացած է. որովհետև ինչպէս նոյն պատմագրաց գրուածներէն որքան որ համառօտ է, այսու ամենայնիւ ունի մի քանի աւելի տեղեկութիւնք և տարբերութիւնք, զորս ի կարգին մեր ծանօթութեանց նշանակելու չեմք դանդաղիր։

Այս առթիւ արժան կը համարիմք ճաշոցին գրչութեան և մի քանի հանգամանաց վերայ ևս գոյզն ինչ տեղեկութիւն յաւելու ի գիտութիւն ընթերցողաց։

Ինչպէս վերև նշանակեցինք, Հայոց 2ԼԵ՝ այն է՝ Փրկչ. 1286 թուականին ուսումնասէր և գիտնական Պարոն Հեթում արքայորդւոյ հրամանաւ և ի վայելս նորին ընդօրինակուած է խիստ լաւ և ընտիր ճաշոցներէն, այնպէս որ Մայր Աթոռոյս Մատենադարանին մէջ գտնուած ճաշոցներուն գեղեցիկագոյն և ընտիր օրինակներէն մին, և գրեթէ առաջինը կարէինք դասել՝ եթէ դժբաղդաբար՝ մէջը ոչ սակաւ թերթեր պակսած չը լինէին։

Որպէս գրչութիւնը և գրեթէ անսխալ ընդօրինակութիւնը. նոյնպէս մագաղաթը՝ շատ գեղեցիկ և փայլուն և ընտիր է, ոսկեզօծ և գոյնզգոյն ներկօք զարդարեալ ծաղկամիք, գլխագրովք և հետաքրքրական այլ և այլ պատկերօք, և շատ տեղերը այնպէս մաքուր և յստակ մնացած են, կարծես թէ՝ դեռ նոր աւարտեալ լինի ընդօրինակութիւնը և՝ ծաղկանց և՝ պատկերաց՝ և՝ այլ զարդարանքը։

Գրիչը և ուր գրուած լինելը մէջը ոչ յայտնի գոլով, միայն հաւանականաբար ի Սիս Մայրաքաղաք կը գուշակուի գրուած լինել. և ինչպէս կը գիտեմք նաև, երբեմն Սսոյ ԱՌ-ՆԵԼ ԱՀՈՊՀԱՆԵՐ- ցեղին ժառանգութիւն մնացած է երկար ժամանակ։

Յիշատակարանիս շարունակութեան մէջ՝ մինչ կը գայ այն տեղը՝ յորում գրուած է այսպէս, "Բ-յց Արդ-ն Լ-ն . . . Լ-ր-հ-ն-ն-ա-լ ՀԸՐԻՆ Ի-Ր Ա ՂՐ-ՈՐ Դ Ի-Ր Զ-ԴԷ", վերջին Զ-ԴԷ անուան վերայ—8—թուանշանի նման յաւելցած նշանով՝ ըստորին լուսանցը հետևեալ ծանօթութիւնը գրուած կայ այսպէս։

"Ի Հրպտ (ի Հայրապետութեան) Տ. Տէր Մի-
"նաս Կաթողիկոսին՝ Թվականս Հայոց (կրկին
"Ը-ԻԷՐԴ ձև նշանով ի լուսանցին ճաշոցի երկայ-
"նութեան գրուած է) ՌՀԻ (1628), Նուաստս յա-
"մենայնի Յակոբ Սսեցի, որ յայժմ եմ Փակակալ
"ի գուռն սուրբ Լուսաւորչի։ Ի Կիլիկիայ այսմ
"(այժմ) որ Ի-Ր-Ա-Ն ասի, Բ և Գ եղբօր հետ
"եկայ գնացի, սանդրիստով, Թվական Նորա (գուցէ
"Ակներ ուխտի) որ ի դռան վերայ կայր՝ կարդացի։
"Որ էր օրինակ այս։—Կատարեցաւ յարմարումն
"շինուածոյ հիւանդանոցիս՝ հրամանաւ մեծաւ փա-
"ռաւք Քրիստոսասէր թագուհւոյ Զապկի ի թը-
"վականութեան Հայոց ի Ո և Ղ։"—

Ի վերջ յիշատակարանիս ուրն թերթ թուղթ յաւելցած է յետոյ. որոց երրորդ թերթին երկրորդ երեսին մէջ գրուած վերանորոգութեան յիշատակարանիննայելով, և միևնոյն ձեռագրով յիշատակարանին մեզ անյայտ պատճառով՝ վերջին պարբերութեան գրեթէ մեծ մասը՝ այն է՝ սկսեալ

"զնոսա որ աւուրս Լևոն Թագաւորիս եմուտ ի իւրեանս. զարձեալ աւուրս Լևոնի եկն զօրօք բազմօք աշխարհս Հայոց" մինչև յիշատակարանի ցաւարտ՝ օրինակեալ լինելով բամպակեայ թղթի վերայ, պէտք է ասել, որ ՌՃԽԳ թուականին Ատանա քաղաքին մէջ Իսկէնտէր անուն կազմարարի ձեռամբ՝ ճաշոցի կազմի վերանորոգութեան առթիւ կամ հարկաւորութեամբ յաւելացուցած են։ Նոյն ութն թերթերէն այժմ երեքը ամբողջ մնացած են, իսկմիւսները կտրուած։

Աստ չեմք կարծեր աւելորդ լինել նաև վերանորոգութեան համար վերջին թերթին երկրորդ երեսին մէջ գտնուած յիշատակարանը հաղորդել ընթերցողաց։

"Վերստին նորոգեցաւ Գիրգս ի մայրաքաղաքն "Ատանա ձեռամբ սուտանուն Իսկէնտէր դպրի ի "Թուականիս մերում ՌՃԽԳ ի Հայրապետութեան "Տեառն Տէր Հարին Աստուածատուր Կաթողիկոսի "տանն Կիլիկիոյ յուլիս ամսոյ Թ, ի խնդրոյ բա"րեսէր և բարեմիտ Աջբան (Աջպան կամ Աջապա"հեան) Երիցու որդին տէր Ռուբստակէսի (Արիստա"կէս կամ Ռստակէս), ի վայելում իւր և Ս-ոյ Եղէ"ղ-ոբվրդեանն*) Եւ տէր Քրիստոսն Աստուածն ամ"նայնի բարով վայելել տացէ։

"Արդ ես սուտանուն Իսկէնտէր երես անկեալ ա"ղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք ի սա կարդա"լով կամ օրինակելով, յիշեսջիք սրտի մ'ոգ զՀայրն "իմ զՊօղոսն և զմայրն իմ զԽանում և զեղբայրքն "իմ։ Եւ մեք ըստ չափոյն մերոյ նորոգեցաք և կազ"մեցաք զդիրքս զայս։ Եւ ո՛վ որ յիշէ զմեզ՝ յի"շեալ լիջիք և դուք աւուրն ահեղին բարեխօսու"թեամբ սրբուհւոյ Աստուածածնին և երանաւետ "ձայնին՝ որ ասէ "Եկայք օրհնեալք Հօր իմոյ. ա"մէն։ Հայր մեր"։

"Դարձեալ ո՛վ հարք և եղբարք իմ՝ աղաչեմ "զձեզ, որ որք հանդիպիք գիրքս այս, միոյ հայր "Դեղայէ- յիշեցէք զայս գիրս գրողին հոգւոյն. "փառք Քրիստոսի՝ որ այսչափ շնորհս պարգևեր է "առատապէս, որ աղդի աղդի ծաղկով զարդարեր "է. զերէ (քանդի) ես տեսայ, փառք մատուցի "տվօղին այսչափ շնորհս։ Ո՛վ հարք և եղբարք "խնդրեցէք ի Քրիստոսէ վասն իմ, որ սորա շնոր"հացն մէկ կաթ մի պարգևեսցէ մեղաւորիս։ Եւ "ով որ յիշէ զսա, վարձն ի Քրիստոսէ առցէ, ամէն"։

"Փառք Ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որ"դւոյ և սուրբ Հոգւոյն այժմ և միշտ և յաւի"տեանս յաւիտեանից, ամէն"։

~~~~

"Ի թուականութեանս Հայոց ՃԼԵ յանկ եկեալ կատարեցաւ աստուածախօս մատեանս, հրամանաւ Աստուածասէր և Ամենիմաստ՝ Բարեպաշտ և Հանճարեղ Պարոնին Հեթմոյ՝ որդւոյ Քրիստոսապսակ սուրբ Արքային Լևոնի։ Որ լի՛ և պատարուն իրրև զծաղկաղարդ բուրաստան հաւաքեալ ի հին և ի նոր օրինաց, ի պէտս պայծառութեան Տօնից տէրունականաց, հրաշափառ Ծննդեան Քրիստոսի, և Կենսաբեր Զարչարանացն, փառաւոր Յարութեանն, և սքանչելի Համբարձմանն, պայծառ Դալստեանն սուրբ Հոգւոյն, և պլոց Փրկչական Տնտեսութեանցն։ Ընդ որս և սրբոցն Աստուածոյ, Առաքելոց և Մարգարէից, բազմաչարչար Մարտիրոսաց՝ Հայրապետաց և միանձանց, և ամենայն հաճոյացելոց Աստուծոյ, որով մեծախորհրդութիւնն, և շնորհ մերոյ փրկութեանն՝ միշտ հոչակի յԵկեղեցիս սրբոց, խնկանուէր հնչմամբ առաջի Աստուծոյ։ Ի բարեխօսութիւն մեզ մեղաւորացս, ի վարդապետութիւն խրատու յաւիտենական կենացն ժամանելոց։

Զայս խրախճանութիւն հոգևոր, և անմահական փարթամութիւնս ստացաւ նախայիշատակեալ բարեսէր Պարոնս մեր Հեթում. որ է շառաւիղ բարեշնորհ բղխեալ յարմատոյ թագաւորութեան Թորգոմեանս սեռի, և Աքանաղեանս տոհմի, որ յայտնաբանեալ լինի զայս ձև օրինակի։

Յորժամ յաղախնածին (1) զօրացն սրոյ՝ և ի Պարսկականն խակամիտ նենգութենէ՝ սպառեցաւ թագաւորութիւնն Հայոց ի տանէն Արևելից, և բարձաւ բաղուկ տէրութեան նոցին ի կողմանցն

(*) Նոտրով նշանակեալները չգիտեմք ինչու ջանացած էին քերելու ջնջելու. բայց չը յաջողելով սևացուցած աւրած էին թանաքով։

(1) Հոգրոյցի+ կամ Լոմայելեան+ և կամ Ազգի+։ Թէև կան պատմագիրք որ իւրեանց պատմագրութեանց մէջ գրեթէ ըստ մեծի մասին կը շփոթեն Հոգրոյցի+ը կամ Լոմայելոյցի+ը Պարսից հետ, ինչ-
~~~~

հիւսիսոյ, յայնժամ սահեալք իշխանք Հայոց և որք ընդ իշխանութեամբ նոցին՝ զետեղեալ պանդխտեցան ի ստորին կողմանս Գամրաց և Պոնտոսի. որք և անդանօր նեղեալք և նահանջեալք ի նենգաժէտ յաղգէն Ցունաց, խոյս տուեալ եկին ի սահմանս Կեսարիայ Կապադովկացւոց։ Որոյ տիրեալ քաջութեամբ Արքայն մեծ Գագիկ, և զբաղումս ի Ցունաց սատակեալ, ընդ որս և զՄետրապոլիտ քաղաքին զՄարկոս, որ եղեռնական բարուք՝ զանուն Ազգին Հայոց՝ շանն իւրոյ մակադրեալ՝ Արմէն անուն վերադայնէր 2)։ Արքայն բարեշուք՝ զնա և զշունն իւր ի միում քրձի չար հարուածովք գանից ի միասին սատակեաց։

պէս երբեմն մի քանի գրուածոց մէջ Թուրքաց աղգէն Իկոնիոյ Սէլջուկեանց Սուլթաններն ևս Հռոմայեցւոց Թագաւոր ևն կը կարծուէին՝ Իկոնիոն բուն Ցունաստանի մէջ լինելով։

(2) Այս անցքը որ կատարուեցաւ Հայոց ՇԻԷ և Փրկչ. 1078 թուականին մէջ, մերազնեայ մի քանի պատմագրեր՝ ինչպէս և Վահրամ Վարդապետ (յերես 191) այլ և այլ կերպիւ կը Պատմեն. յորոց կը քաղէ և Զամչեան Հ. Միք. Վարդապետն ի պատմ. Հայ. Բ. հատոր. յերես 1002 և 1003։ Իսկ Սմբատ Սպարապետ պատմագիրն ևս ըստ այսմ կը հաղորդէ մեզ։ "Էր յաւուրսն "յայն մետրապոլիտ մի Կեսարիայ Մարկոս անուն՝ "յոյժ անուանի և փարթամ և հայհոյիչ աշխարհիս Հայոց։ Նա շատ աղճատէր զՀայերն, և այն"չափ, մինչ զի շանն անուն արձն էր դրել։ Իսկ "թագաւորն Գագիկ գիտէր զչարիս նորա, և սպա"սէր դիպող ժամու առնել չար գործոց նորա փո"խարէն։ Եւ յորժամ եկն ի Կեսարիա, էառ իջե"ւանք ի տուն Մարկոսի. և Մարկոս ընկալաւ զնա "ուրախութեամբ յոչ կամաց։ Իրրև ճաշեցին և "ուրախացան ի գինի, ասէ Գագիկ ցՄարկոս, լսէ։ "ԵՍ ԸՆ ՌԵՃ ՇՈՒՆ ՈՒՆԻ, ԵՒ ԿՈՉԻՄ ԶԵՌՈՒՆԷԼ ՆՈՒ։ "Զայնեաց մետրապոլիտն զշունն և ասէ. արձ՛ն "արձ՛ն. և եկն շունն։ Եւ ասէ Գագիկ. արձ՞ն է "անուն շանդ։ Ասէ Մարկոս, ՀԱՆ ԲԱՆԴՄ ՁԷՐ։ "ԸՆԴԱՆ ԿՈՉԻՄ ՆՈՒ ԱՐՁՆ։ Եւ ակնարկեաց Գագիկ "զինուորացն. և նոքա կալան զշունն և ածին "ի քուրձ մի զոր յառաջ տարել էին։ Տեսեալ "զայն Մարկոս՝ բարկացեալ խլէր զշունն։ Եւ "քմծաղրեալ Գագկայ՝ հրամայեաց բռնել զշուն "Մարկոսն և ածել ի քուրձն ընդ շանն։ Եւ նոքա "արարին այնպէս. կապեալ զբերան քրձին սկսան "դալար փայտօք ծեծել զշունն. և շունն բարկա"ցեալ լափէր զՄարկոս, մինչև սատակեաց զնա "....։ (Տես ի պատմ. Սմբատ. Սպար. յերես "81. 82. տպեալ ի Կ. Պ. Շահ։)

Վասնորոյ և յընդանուր Ցունաց բնակչաց աշխարհին որսացեալ եղև. որով և սպանաւ արդար արքայն յամբարիշտ որդոցն Մանտալէի, ի բերդն կնդռասկաւի 3)։ Եւ յայնմ պատճառէ ցրուեցան պայազատքն Հայոց, և այլ ևս խառնիճաղանջ բազմութիւնքն ընդ բազում տեղիս և գաւառս պանդխտացեալք։

Ընդ որս և մեծափառ ոմն իշխան իշխանաց ի սեռէ Թագաւորութեանն, արևանառու մեծին Գագկայ, Ռուբէն անուն, յինքն յարեալ զյղջովս ի զօրացն, խաղացեալ գայ և առնու զամրոցն զԿաւսիտառայ 4)։ Յորում և դնէ ինքեան տուն իշխանութեան, և տիրէ լեռնակողմանցն Փոիգոյ. և բարեպաշտութեամբ կենաց կացեալ փոխեցաւ առ Քրիստոս։

Յաջորդեալ զփառս Նորա որդի Նորին Կոստանդին, այր քաջ և արդարագործ, որ և ի բազմաց սիրեցեալ եղև բնակչաց աշխարհին Կիլիկիայ. որոյ ձեռնտուութեամբ ելեալ ի Ծովակողմի Տօրոսի տիրեաց Նահանգին այնորիկ, նախ առեալ զդղեակն զՎակայ (զՎահկայ). և անտի յառաջ յղջովից տիրեալ տեղեաց, դաշտաց և ամրոցաց, զյոգունս ի Ցունաց հարեալ։

(3) ԿՆԴՌԱՍԿԱՒ կամ ԿԷՂԷՌՈՒ և կամ ԿԷՂԷՌԲ, Արժիաս դաշտին մէջ։

(4) Ըստ այսմ կը գրէ և Վահրամ Վարդապետ, այսինքն՝ Ռուբէն Ա Իշխան՝ Նախ ԿՈՒՊԱՌ կամ ԿՈՂԷՌԱՌ ամրոցը յինքն գրաւեց. միայն իւր անուամբ կոչուած ճոխութեան հիմը անդ հաստատելը չը յիշեր, զոր կը հաղորդէ մեր Ցիշատակարանը։ Սակայն Մխիթարեան Մայր Աթոռոյս Բարեյիշատակ Կ. Վ. Շահնազարեանց՝ Կիրակոս պատմագրին հետևելով՝ Վահրամայ պատմագրութեան տպագրութեան մէջ յաւելացուցած ծանօթութեանց 14դրդովը յերես 244 կը պնդէ Ռուբէնին ոչ նախ ԿՈՂԷՌԱՌ, այլ ԲՈՅՐԲԷՐԴԸ կալնուլը։ Թէև Կիրակոսը մի քանի տարի յառաջ է գրած և աւարտած պատմութիւնը քան զՎահրամ և քան զՀեղինակ Ցիշատակարանիս, սակայն դարձեալ ոչ միայն ժամանակակից կարելի է համարել զերիքեան ևս, այլ և Վահրամ և Ցիշատակարանիս հեղինակը՝ միաբան վկայութեամբ կ'պատմեն։ Իսկ գուցէ և Կիրակոս համաձայն գրած լինէր ըստ նոցա, եթէ օրինակողաց պատահական սխալանաց ենթարկուած չէ, որ անհնար է չլինիլ։ Այսու ամենայնիւ թէև Վահրամայ պատմագրութեան ևս օրինակողներէն այն-

Այլ և Փռանգ զօրուն՝ որ յԱնտիոք, Նիզակակից եղեալ ընդդէմ Իսմայէլեան զօրուն, և քաջութիւնս զարմանալիս անդանօր կատարեալ, հիացեալ զարիականաց զունդն. յորոց և Կոմսութեան անուն ստացեալ Մ-ՐԷԷՂ զնա վերակոչէին։

Եւ այնպիսի յաղթական կենաց կեցեալ, և ծընեալ երկու որդիս, և զԹորոս և զԼևոն, ինքն փոխեցաւ առ Քրիստոս, և թաղեցաւ ի սուրբ ուխտն Կաստաղաւն։ Տուեալ զիշխանութիւն իւր որդւոյ իւրոյ Թորոսի, այն որ ի Ցունաց պատուեալ Պռոտաւսեւաստիոս կոչեցաւ։

Որ և իսկոյն ընդ տիրելն խնդրեաց զվրէժ արեանն Գագկայ յորդւոցն Մանտալէի։ Եւ առեալ զամրոցն յոլով գանձիւք և զնոսին չարամահ սատակեալ, բերեալ ընդ ինքեան զպատկեր Տիրամօրն, եդ ի զղեակն Անարզարայ, զոր իւր առեալ էր ի Ցունաց։ Ցորում և շինեաց զհռչակաւոր տաճարն. և եդ անդ զպատկերն որպէս և գրեալ է յարձանի ի շինուածս տաճարին։ Այլ և բաղում եկեղեցիս և ժողովարանս միանձանց շինեալ, և առատաւուր պարգևօք կարգաւորեալ ճոխացոյց, միանգամայն և հիւրանոցս բազումս և ամենայն աղգաց քրիստոնէից տեղի և տուն պատրաստեալ յարդեցաւ, բարձրացաւ, և հռչակեցաւ յամենայն լեզուս։ Որք զԿիլիկիայ անուն լքեալ՝ Թորոսի երկիր զաշխարհն Նորին վերս ձայնէին. և նա բարեբարուք կենցաղավարեալ հանգեաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի սուրբ ուխտն Դրազարկն, թողեալ իւր որդի մի, որ ննդեալ սպանմամբ յամբարշտաց ոմանց։ Վասնորոյ ընկալաւ զիշխանութիւն մեծին Թորոսի եղբայր Նորին Լևոն. որ և ծնեալ երիս որդիս, զԹորոս, զՍտեփանէ, և ի հարձէ 3) զոմն Ռուբէն անուն։ Այս Լևոն տիրեալ Մամեստիոյ և Տարսոնի, և ամենայն ուցէն նահանգի, և աջակցեալ Փռանգաց ի գործ պատերազմի՝ քաջութեան անուն ստացաւ. և կացեալ յիշխանութեանն կարողագոյն կենաց և առաքինի վարուք, մինչև եկն թագաւորն Ցունաց Փեռփեռօժէն 6) ի Կիլիկիայ և պատրանաց կոչեալ զԼևոն ըմբռնեաց ի կապանս երկու որդովքն Թորոսիւ և Ռուբինաւ, ոչ դիպեալ անդ Մլեհին և Ստեփանէի։ Զի կային յՈւռհայ, առ կոմն Նորին, որ էր քեռի ինքեանց։ Առեալ Փեռփեռօժէն զԼևոն որդւովքն, տարաւ ի Կոստանդինուպօլիս և արկ ի բանտ. յորում տեղւոջ Ռուբէն վասն անհնարին քաջութեանն կուրացուցին կուրացեալ նախանձով ազգն Ցունաց։

Եւ մեծն Լևոն (և) որդի Նորա Թորոս մնացին անդանօր ի բանտի. և իշխանութիւն Հայոց բարձաւ ի Կիլիկիոյ, տիրելով վերստին Ցունաց։

Ցետ ժամանակաց ինչ լինելոյ ի բանտի՝ ետես երազ որդի Նորա Թորոս, և պատմեաց հօր իւրում՝ թէ տեսի յանուրջս, զի այր ոմն տայր յիս նկանակ մի հացի, և ձուկն ի վերայ. և ես առի և քեզ ոչ ետու ի նմանէ։ Եւ հայրն խնդացեալ կոչէ զտեսիլն որդւոյն, թէ ունիս վերստին տիրել Կիլիկիոյ, զոր նախնիքն մեր կալան քաջութեամբ. այլ և ընդարձակեսցես զտէրութիւնն քո մինչև ի ծով, զոր ձուկն նշանակեաց։ Սակայն ես յայն ոչ ժամանեմ։ որ և եղև իսկ. զի մեռաւ մեծն Լևոն ի Կոստանդինուպօլիս։

Եւ մեծն Թորոս գտեալ օգնութիւն յԱստուծոյ, և դիպօղ ժամու վերստին եկն ի Կիլիկիա, և ձեռնտուութեամբ լեռնակողմանցն Տորոսի աղինս Հայոց՝ որ մնացեալ էին անդանօր, տիրեաց նախ Վահկային, և ամենայն Փոխգիոյ 7)։ Եւ յետ սա-

---

պիսի մի փոփոխութեան ենթարկուած կարծել կարելի էր, եթէ մեր Յիշատակարանը՝ ինչպէս որ հեղինակը գրած է, նոյնը հարազատութեամբ մեզ մնար չունենայինք. որոյ օրինակն է՝ զոր կը հրատարակեմք ամենագրոյս մէջ ճշդութեամբ։

(5) Ցայսմ մասին միւս ժամանակակից ինչպէս Կիրակոսի՝ Սմբատայ՝ և Վահրամայ պատմագրութեանց մէջ չ'կայ յիշատակութիւն՝ որպէս թէ՝ Լևոն իւր հարձին ունեցած է զՌուբէն որդին։ Նաև յիշատակարանս Լևոնին երիս որդիս ծնեալ կը գրէ, այն է՝ Թորոս, Ստեփանէ և Ռուբէն. և մի քանի տող ստորև՝ չորս որդիք կը յիշատակէ Մլեհովն որ Ռուբէնէն մեծն է։

(6) Յ-ՎՇՆՆԷ—ԿՈՄՆԷՆ—ՊՈՐՖԷՌՕՀԷՆԷ (ծիրանածին)։

(7) Մեծն Թորոս երբէք չ'կարողացաւ տիրել ՈՒՆԱՅՆ ՓԽԷԳԻՈՅ։ Ուստի պէտք է ասել, որ յիշատակարանիս հեղինակը կամ՝ սխալմամբ գրած է, կամ՝ Փ-Խ-Գ-ոյ վերայ սխալ տեղեկութիւն ունեցած է, և կամ՝ գուցէ այն ժամանակ այլ կերպ սահմաններ ունեցած լինի Փռիւգիան՝ եթէ մեք չենք սխալած։

կաւուց Անարզարոյ և ամենայն դաշտակողմանն. զորոյ զյեղանակ գաղստեանն ի Կոստանդնուպօլսէ և զտիրելոյն Կիլիկեայ՝ այլ և այլ օրինակաւ պատմեն զիրք. բայց որպէս և է զԹուլթեամին Աստուծոյ և օգնութեամին ազատեալ ի բանտէ, վերըստին տիրեաց իշխանութեանն նախնեաց իւրոց, զոր յափշտակեալ էր Յունաց։ Եւ ևս ընդարձակեալ զբաղուկ տէրութեան իւրոյ, գնաց ի Մամեստիայ. և առ զնա։ Եւ մինչ կայր անդ յանհոգս, Տուկն Յունական ազգին, որ էր ի կայսերէ կարգեալ, ժողովեալ զզօրս իւր, ևս և զՀայկազունսն, զՆաթանիլեանք 8) զՏեարսն Ասկուռայ, և զՀեթում Տէր Լամբրունին. որք և նոքա յարևելից ի սրոյն Խամայելացւոց խոյս տուեալ եկին և կալան զկողմանսդ նախասացեալ, և մտին ընդ հնազանդութեամբ Կայսերն Յունաց։ Վասնորոյ և ընդ նոցին զօրաց և զօրապետի եկին ի վերայ Թորոսի ի Մամեստիա։ Եւ նա յարուցեալ սակաւուք արամբք՝ անդէն և անպատրաստ ի վերայ անկաւ բիւրական զօրացն՝ յեղակարծ ժամու. զՅոյնան եպսան, և զՀայկազունսն ձերբակալ արարեալ՝ կալաւ, և յետոյ ազատեաց 9)։

Եւ այսպէս քաջացեալ էառ զՏարսոն և զյոլով մասն Սամբիոյ։ Զորոյ քաջութեան համբաւ

(8) Նաթանիլեանց համար Հ. Զամչ. Մեք. Վ. (ի պատմ. Հայ. հատ Գ յերես 73) թէև ազգաւ Հայ էին կ'ասէ, բայց (յունադաւան) Յունաց ծէսերը ունէին։ Սակայն ինչպէս և Կ. Վ. Շահնազարեանց կը յաւելու Վահրամայ պատմագրութեան ծանօթութեանց մէջ, երբէք մի ապացոյց կամ որ պատմագրէն առած լինելը չէ ցցուցած։

(9) Այսպիսի վերանձնութեամբ՝ Մեծն Թորոս՝ արդարև մեծ գովեսանելու արժանաւոր է. և այսպիսի ազգասիրական վսեմ ոգւով ճշմարիտ Հայ և Հայութեան փառք հանդիսացած, կը ներէ մեբաղնեայ Նաթանիլեանց և Հեթմեանց հանդերձ Հայազունդ զօրք նոցին, (որք գուցէ Յունաց երկիւղէն ըռնադատեալ՝ ակամայ իւրեանց Ազգակցին՝ Հայաստան Ազգի Հրոյ-Ոչ և փառաւորութեան հիմն վերանորոգելու և ամուր խարբսելու ճգնող Մեծն Թորոսի վերայ եկան,) և ձեռակալելէն զկնի աղատ կը թողու զնոսա զամենեսին, միայն իւր սուրը Յունաց արեամբք զոհացնելով։

լուեալ Կայսերն Էմմանուէլ 10)՝ որդին Փեսիլեոսժէնին, մանեալ իրրև զառիւծ՝ եկն զօրք բազմաք ի Կիլիկիայ՝ ըմբռնել զԹորոս. և պաշարեալ զնա ի դղեակն Բարձրբերդ կոչեցեալ։

Յարձակեալ ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն Յունաց՝ զբաղումս եսպան, և զյոլով Սեւաստիոսս գերի տարեալ ի դղեակն, վաճառեաց ընդ ոսկւոյ Կայսերն Էմմանուէլի, և զղանձն բաշխեաց իւրոյ հետեւակաց զօրուն։

Ընդ որոյ քաջութիւնն և առատամտութիւնն զարմացեալ՝ կոչեաց զնա իւր յորդեգրութիւն. և ետ զԿիլիկիա ձեռնադրով և ոսկի վուլով Թորոսի, և այլ զանձս բազումս. և ինքն գնաց ի Կոստանդնուպօլիս։

Եւ վերստին լուեալ զՀամբաւ բարութեան և զքաջութեան մեծին Թորոսի Կայսրն Էմմանուէլ, և ոչ կարացեալ տանել նախանձու, սկսաւ կաշառօք գրգռել զԽլիճ-Ասլան Սուլթանն յԻկոնիոյ ի վերայ Թորոսի. որ և եկեալ բազում զօրօք ի Կիլիկիա պաշարեաց զԹիլն աւան. և ի Տեառնէ պատուհասեալ ախտիւ և ցաւօք, զորոց զերիվարսն շանաձանձ սպառեաց։

Ել և մեծն Թորոս ասպատակեալ զաշխարհն յԻկոնիոյ աւերեաց, և զառ և զաւար էած ի Կիլիկիա։ Վասնորոյ յայսմանէ Խլիճ-ասլան և ի Հարուածոցն Աստուծոյ նեղեալ՝ ամօթոյ զարձաւ յաշխարհն իւր, սէր երդմամբ եղեալ ընդ մեծին Թորոսի, և այլ ոչ հրապուրեցաւ ի բանն Էմմանուէլի։

Բայց իրրև եկն Թորոս ի Կոստանդնուպօլսէ ի Կիլիկիա, լուեալ եղբօր նորա Ստեփանէի՝ եկն առ նա 11)։ Բայց Մլեհն մնաց առ Նուրատին Սուլ-

(10) Այս այն Կէր-Լիմանոս-էն է, որ շատ ջանաց Հայոց և Հոռոմոց եկեղեցեաց միութիւն կազմել, այլ ի զուր . . . և հարկ էր այնպէս լինել։

(11) Հ. Մ. Զամչեան ի Պատմ. Հայ. հատ. Գ. յերես 63. Մեծ Թորոսի եղբայր Ստեփանէին յԵղեսիոյ Մեծն Թորոսի քով վերադառնալը կը գրէ Մլեհ եղբօր հետ, զոր մի յիշատակարան չը յիշեր։ Սակայն կը յաւելու մեր յիշատակարան. «Բայց Մլեհն մնաց առ Նուրատին Սուլթան», որ շփոթ միտք կը ծնանի, այսինքն՝ կամ այն է՝ որ յիշատակարանիս հեղինակը անկարող եղած է Մլեհին առ Նուրէտտին երթալոյն բուն

թանն Հալպայ. և Ստեփանէ ձեռնտուութեամբ եղբօր իւրոյ՝ գնաց ի Սեաւ լեառն և տիրեաց ամենայն կողմանցն այնոցիկ. այլ և կալաւ զԿերմանաստան և զՄելիտինէ. Եւ դաւեալ ի Ցունացն (12) սպանաւ յեռանդան կատաղի. և թաղեցաւ ի սուրբ ուխտն յԱրքակաղնին, թողեալ իւր երկու որդի՝ զՌուբէն և զԼեւոն, որ և յետոյ թագաւորեցաց։

Այլ մեծն Թորոս տիրեալ քաջութեամբ Կիլիկիոյ և Սալբիոյ, վարէր զիշխանութիւն ըստ հաճոյից Աստուծոյ. զի էր այր բարեպաշտ և ողորմած, մեծախորհուրդ և առատամիտ, վարժեալ հին և նոր օրինաց Աստուծոյ, Տեղեակ գոլով և ամենայն իմաստասիրական արհեստից. զորմէ ասեն հոգի մարգարէութեան ունէր. որ և բազում զժուարալոյծ բանս մեկնեալ, զոր գտանի այժմ առ մեզ։ Կեցեալ սա այսպիսի բարեպաշտ կենաց՝ փոխեցաւ յաշխարհն կենդանեաց, և հանգուցեալ եղաւ ի գամբարանի ի հռչակաւոր անապատն սուրբ ի Դրազարկն։

Եւ զերկիր իշխանութեան իւրոյ և զմատաղ որդին իւր վստահացաւ յաներն իւր Թումաս անուն իշխան մեծ, զոր և Պայլ իսկ ետ Հայոց յետ իւր։ Այլ Մլեհն լուեալ զմահ եղբօր իւրոյ Նիկէ և զՊեհլեանի։ Եւ դաւեալ ի Ցունացն (12) սպանաւ յեռանդան կատաղի. և թաղեցաւ ի սուրբ ուխտն յԱրքակաղնին, թողեալ իւր երկու որդի՝ զՌուբէն և զԼեւոն, որ և յետոյ թագաւորեցաց։

Այլ մեծն Թորոս տիրեալ քաջութեամբ Կիլիկիոյ և Սալբիոյ, վարէր զիշխանութիւն ըստ հաճոյից Աստուծոյ. զի էր այր բարեպաշտ և ողորմած, մեծախորհուրդ և առատամիտ, վարժեալ հին և նոր օրինաց Աստուծոյ, Տեղեակ գոլով և ամենայն իմաստասիրական արհեստից. զորմէ ասեն հոգի մարգարէութեան ունէր. որ և բազում զժուարալոյծ բանս մեկնեալ, զոր գտանի այժմ առ մեզ։ Կեցեալ սա այսպիսի բարեպաշտ կենաց՝ փոխեցաւ յաշխարհն կենդանեաց, և հանգուցեալ եղաւ ի գամբարանի ի հռչակաւոր անապատն սուրբ ի Դրազարկն։

Եւ զերկիր իշխանութեան իւրոյ և զմատաղ որդին իւր վստահացաւ յաներն իւր Թումաս անուն իշխան մեծ, զոր և Պայլ իսկ ետ Հայոց յետ իւր։ Այլ Մլեհն լուեալ զմահ եղբօր իւրոյ

պատճառը և ժամանակը հանդերձ պարագայիւքն իմանալ և գրել, և կամ՝ Մլեհ Ստեփանէի հետ Եղեսիայէն փախչելով նորա պաշարման ելն միջոցին (ՇԳ՚Դ – 1144 թ.) իւր եղբօր՝ Մեծն Թորոսի մօտ առանց գալոյ՝ ուղղակի գնացած լինի և ապաւինած առ Նուրէտտին։ Թէև յայսմ մասին Վ.ահրամ՝ յերես 202՝ Թորոսին ի Պօլսոյ գալստեան վերայ եղած այլ և այլ տարաձայնութիւններէն երկուքը յիշած ժամանակ կը գրէ թէ, «Առանձնակի Թորոսն եկեալ, և յԱնտիոք նաւու եկեալ, ի Կիլիկիա անդէն մնեալ։ Զստեփանէ անդէն գտեալ, և միարան թագաւորեալ . . . . սակայն այսու ամենայնիւ՝ Մլեհ՝ առանց երկիւղ ունենալոյ և կամ մի որպիսի՝ և իցէ կասկածանաց առիթ եղբօր Մեծն Թորոսի վերայ՝ երբ չէր մեղանչած նորա զէմ, անհնար էր և կամ հաւանական չէ՝ որ նա փոխանակ եղբօր մօտ գիմելու Ստեփանէի հետ և ապաւինելոյ նմին, ուղղակի սիրէր այլազգի և գրեթէ թշնամի մի անձի քով գիմելու և ապաւինելու Նուրէտտին Բուլթանին Բերիոյ (Հալէպ)։ Դարձեալ թէև Սմիւռնա պատմագիր (յերես 99. հետևեալ յօդուածով ըստ բաւականին կօժանդակէ մեր կարծիքը փարատելու, «Իսկ եղբայր նորա (Թորոսի) Պարոն Մլեհն էր այր չարարարոյ, կուղէր որ սպանանէր զՊարոն Թորոս. և յարեցոյց յինքն այլս ոմանս օգնականս իւրոյ չարութեան։ Եւ օր մի եկան երկուքն ի յորս ի մէջ Մսիսայ, և կամէր Մլեհն զչար խորհուրդն իւր անդ կատարել, և սպանել զեղբայրն։ Եւ Պարոն Թորոս զիտաց և կալաւ զՊարոն Մլեհ. և առաջի իշխանացն քըշփեց խիստ զնա, և ետ նմայ շատ ոսկի և արծաթ, ձի և ջորի, և եհան զնա յերկրէն. և այլ չար չարար փոխարէն նմա։ Իսկ նա գնաց առ Նուրէտտին Հալէպոյ Նուրէտտին, և էմուտ ի ծառայութիւն նորա։ Այսու ամենայնիւ չգիտեմք ինչ. 50—70 կամ սակաւ ինչ ևս աւելի ամաց միջոցաւ յառաջ անցած մեր ազգային կամ Ռուբինեան իշխանաց ցեղին անցքերը ու դէպքերը աւելի մանրամասնաբար չը հաղորդեր՝ գէթ աւելի կարևորագոյնները, որք անշուշտ ժամանակակից անձինք կունենային, որք և կրնային աւանդել բերանացի թող յիշատակարանները, յորոց և մեք կարող էինք ընդ այլոց տեղեկութեանց՝ Մլեհին և Ստեփանէի հետ և կամ առանձին և երբ Թորոսին քով գտանալը իմանալ։ Այժմ Սմիւռնայ վերի յօդուածէն այսչափ միայն կարելիք լոյս ունենալ Մլեհի վերայ, որ նա Թորոսի մօտ եկած է և յետոյ աքսորուած ի Նմանէ. որով և Մլեհ կը պարտաւորուի Բերիոյ Սուլթանին գիմելու և նորին ծառայութեան մտնելու։ Սակայն կարելի է կրկին հետազբրբիր լինիլ, թէ երբ եկաւ, և թէ ուրիշ անգամ գացած չէր Մլեհ Նուրէտտինին քով, և կամ թէ առաջին անգամն էր այն երթալը՝ զոր վերև գրինք Սմիւռնէն առնելով։ — Թողուցք կախ զայս ևս առժամանակ մի, գուցէ Մեր Մատենադարանի գրեանց յիշատակարանները կը յաջողին լուծել ուրիշ շատ մթին և անյայտ մնացած անցիւ և խնդրոց հետ։—Յաջողութեամբ Տեառն մնացիր եմք յետ ոչ բազում ժամանակաց Ցիշատակարան անուանով Մայր Աթոռոյս Մատենադարանի ձեռագրաց հայոյն յիշատակարանները ի մի հաւաքել, և մի քանի հատորներով ի լոյս ընծայել. որովք անշուշտ եմք մեծ ծառայութիւն մատուցանել և բաւական լոյս տալ Ազգ. և Եկեղց. պատմութեան։

(12) Արժանայիշատակ Կ. Վ. Շահնազարեանց՝ Սմիւռնայ Պատմ. ծանօթութեանց մէջ կը գրէ, թէ՝ Ստեփանեայ սպանանելը՝ հասարակօրէն կը համարուի Անդրոնիկոս Եւփիրիէն, որ Մարաշի սահմանաց մէջ մի փոքրիկ բերդի պահապանն էր։ Իսկ Կիրակոս Պատմագիրը «Անդրոնիկոս զօրավար Ցունաց», կասէ։ Նա և Սմիւռնայ այսպան կը գրէ. «Անդութեամբ անօրէն Տուկին Համուսին, որ ձայնեաց զնա սիրով, և բռնեցին և խաշեցին ի պղինձն»։

զՌՃին Թոքոի, էառ զօր բաղում ի Նուրատտին Սուլթանէն և եկն առնուլ զոհերութիւն ի վերա՝ Հայոց. և բաղում՝ շար հասուցեալ աշխարհիս Կիլիկեցւոց, յորմէ նեղեալ բնակիչք և իշխանք աշխարհիս, կամաք ձեռնտու եղեն նմա, տիրեալ ի վերայ ինքեանց. Ուստի ընդ գալն նորա՝ Թումասն փախչէր յԱնտիոք, ուստի և եկեալն իսկ էր. և զորդի Թորոսին ամբարիշտք ումանք կալեալ սպանին։

(Մնացորդն է յետոյ։)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԿԵԱՆՔԻ ՏԱՐԲԵՐԸ։

(Շարունակութիւն և վերջ։)

Սորանից յետոյ կ'անցնէ Հաքստհաուզն Հայերի մարմնակազմութեան վերայ, նոցա երկրիս ամենազեղեցիկ ու յարմարակազմ ժողովուրդներից մինն ընդունելով։ Հանդիստ, մեղմ, չափաւոր և պարկեշտ բնաւորութեան տէր կ'անուանէ Հայերին։ Բայց ինչպէս Պետցոլդը, նոյնպէս և սա, որ առաջինից շատ վաղ է Հայաստան ճանապարհորդել և Հայերի մէջ ապրել, Հայ վաճառականներին՝ բուն Հայաստանի մէջ բնակողներից կը զանազանէ, նոցա խարերայ և առևտրութեան մէջ բոլորովին կասկածաւոր հոչակուած համարելով։ Սակայն իբրև սրամիտ բանաղատ կը փընտռէ Հայ վաճառականների այս տգեղ յատկութիւններն ունենալու պատճառը, և իրաւ շատ բնականաբար հետևեալ խօսքերով կը մեկնէ։ Հայերը ''օտար, թշնամի, իրանց ատող և արհամարհող ազգերի մէջ սփռուած լինելով, առանց պաշտպանութեան կամքի և բռնաւորութեան տակ հարկադրուած էին կասկածաւոր լինել, իրանց սիրտը ծածկել, այո՛, նաև խաբուսիկ և անհաւատարիմ դառնալ''։

Հաքստհաուզն առանձնապէս կը գովէ Հայերի նատնեկան կեանքը։ Հայերը, կասէ նա, նաև Պարսկաստանի և Թուրքաստանի՝ պատուի արժանի են իրանց տան մէջ։ Ամենեղ կ'իշխէ հին նահապետական պարզ բարքը։ Նոքա ամեն տնային առաքինութիւններն ունին։ Նոքա բարեգործ են և հիւրասէր։ Ամուր կպահպանեն իրանց ազգային սովորութիւնները և ամենից առաջ իրանց ազգային կրօնը։ Բաց ի Հրէաները՝ չըկայ ուրիշ ժողովուրդ, որ Հայերի չափ մարտիրոսներ ունեցած լինի։ Հայերը միշտ անշարժ ու անխախտ մնացին։—Հայերը Հրէաներից այն գերազանցութիւնն ունին, որ նոքա մի ճշմարիտ հայրենիք ունին մինչև այսօր, մի ծննդատեղի, որտեղից նոքա դուրս են քաշուել, և դէպի ուր նոքա հետ նայել կարող են։

''Հայերի նահապետական կեանքը, կը շարունակէ Գերմանացի ուսումնականը, ժողովրդի փոքր-աշխարհին—ընտանիքի մէջ կը ցոլանայ։ Ես ոչ մի ժողովուրդ չեմ ճանաչի, ուր ընտանեկան կապը այնպէս սերտ, ամուր և ներքին լինի, ինչպէս Հայերի մէջ. Հայերի ընտանեկան կեանքը և ընտանեկան սահմանադրութիւնը միւս Ասիական ազգերից կը զանազանուի։ Կանացի սեռի դրութեամբ կամ վիճակով, ճանաչելով այս սեռի անկախութիւնը, հաւասար իրաւունքը և արժանաւորութիւնը, որ ընտանեկան սահմանադրութեան նոյնպէս և այս կնոջ անձի մէջ կ'արտայայտուի։ Ըստ իմ՝, սորա մէջ է Հայերի կոչումն մարդկային բարձրագոյն մշակութեան հասնելու, նմանապէս և նոցա մնաւոր բարձր ընդունակութեան մէջ է նոցա ապագայն, որ կ'երևայ Եւրոպիոյ և Ասիոյ միաւորութեան անդամ և միջոց պիտի լինի։ Մահմետականները կնոջ վերայ իբրև կիսամարդի վերայ կը նայեն. կինը ի ընէ ծնած ըստրուկն է տղամարդի։ Ես կը կարծեմ՝ որ Եւրոպացւոց ժողովուրդների կոչումն դէպի կրթութիւն պիտաւորապէս կնոջ մէջ մարդկային ընութեան հաւասար իրաւունքներ տեսնելու և խոստովանուելու ունորան խորը յարգելու մէջն է''։

Հաքստհաուզնը, Հայերի ընտանեկան յարաբերութիւնների վերայ խօսելով և նոցա սերտ կապը ու միութիւնը ցոյց տալ աշխատելով՝ կ'ասէ, 80ամեայ նահապետի տան երկը տոհմ միասին կապրին։ ''Պայքի ու հարստութեան զանա-